

ւանդութիւնը շարունակութիւնն է ԺԲ. դարու ււանդութեան: Այլի Այծեմնեկին տան տեղը, եթէ երբեք ծանօթ էր, այժմ մոռցուած կը թուի: Սակայն 3-4 դար յառաջ, քաղաքէն մէկ ու կէս քիլոմէթր հեռի, պարտէզներուն մէջ, գէպի արեւելք, Ապու Նապպուա ըսուած շարքերէն կէս քիլոմէթր հեռի, ցոյց կը տրուէր այն գերեզմանական այրը՝ ուր թաղուած էր այս բարեպաշտ կինը: Այս այրը հողաքարի մէջ փորուած սենեակ մ'է, ուր կարելի է իջնել վեց կամ հօթը աստիճան սանդուխով մը: Ան զարդարուած է մոզայիքով և երեք կողմերէն գերեզմանատեղիներ բացուած են: Այս գերեզմանին սեպհականատէր Ռուսերը մատուռի վերածած են զայն փոքրիկ զմբէթով մը: Նոյն գերեզմաններուն իսկութիւնը երաշխաւորելու և անոնց վաւերականութեան վստահելու համար տեղագրական ստոյգ տուիքները շատ տկար են և վաւերագիրները շատ հազուադիւտ: Այծեմնեկին նուիրուած եկեղեցի մը կառուցուած է անոր գերեզմանէն ոչ հեռի: Ոմանք կը կարծեն, բայց անոնց ապացոյցի, թէ այս կնոջ բնակարանը կը գտնուէր միւսնոյն տեղը: (Տե՛ս Vigouroux, Dict. de la Bible, բառն Joppé, էջ 1640):

4. Ս. Նիկողայոս վանքի ծագումը.

Քրիստոնեայ հաւատացեալները՝ շատ հին դարերէ սկսեալ բարեպաշտ սովորութիւն մը ունեցած են, և մինչև հիմակ ալ ունին, ուխտաւորութեամբ երուսաղէմ այցելել Տնօրինական Ս. Տեղեաց երկիրագեղու և պատուելու Փրկչին յիշատակները: Ուխտաւորները յաճախ շատ հեռի տեղերէ կու գային՝ արհամարհելով ծովու և ցամաքի վտանգները. հին ժամանակները, մանաւանդ պատերազմի միջոցին, ծովահէնները կը յարձակէին ուխտաւորական նաւերու վրայ, կը կողոպտէին զանոնք, շատ անգամ կուրի բռնուելով՝ անոնց մէջ մահեր ալ կը պատահէին. այս վտանգներէն զտա երթեւեկի ալիկծութիւններու պատճառաւ ծովամոյն եղողներ ալ կը գանուէին. այդ երկու վտանգներուն մասին մեր ձեռագրաց մէջ յիշատակութիւններ չեն պակսիր, նոյն իսկ քարի վրայ քանդակուած յիշատակարաններ մինչև ցայսօր պահուած կը մնան Ս. Յակոբեանց վանքին մէջ. ինչ-